ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԻՆՆԱՐԱՐ
ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Եթե տաշած քար լինի, գեղնին չի մնա

Գիտությունը պետք է երկխոսություն սկսի տնտեսավարողների հետ

2008թ. գիտական եւ գիտակազմակերպական գործունեության ընդհանուր արդյունքներին նվիրված՝ ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր հավաքում ժողովին երեկ ներկա էին ՀՀ նախագահ **Սերժ Սարգսյանը**, Ն.Ս.Օ.Տ.Տ. **Գարեգին Բ** կաթողիկոսը, վարչապետ **Տիգրան Սարգսյանը**:

Ժողովը սկսվեց Վեհափառի խոսքով ու մաղթանքով, ով նշեց, որ ճգնաժամային հրավիճակները հաղթահարելու համար վճռական է գիտության դերը: *«Ուրախ եմ, որ գիտության բազմաթիվ ասպարեզներում հաջողություններ արձանագրելով՝ ձեր արդյունաբաց ուսումնասիրություններով, փորձնական ու փորձարարական հետազոտություններով, արժեքավոր հոդվածների եւ գրքերի հրատարակմամբ, ինչպես նաեւ գիտնականների նոր սերունդ կրթելով, դուք ամուր հիմքերի վրա եք դպահպանում գիտությունը Հայաստանում»*,–դիմեց նա գիտնականներին:

ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս **Ռաֆիկ Մարտիրոսյանը,** հանդես գալով ԳԱԱ-ի նախորդ տարվա գիտական գործունեության հիմնական արդյունքների եւ գիտության զարգացման հեռանկարների մասին զեկույցով, նշեց, որ կիրառական տեսանկյունից մեր գիտությունը հետ է ընկել: Բայց հիմնարար գիտությունների ասպարեզում, չնայած մեր դժվարություններին, մենք հետ չենք մնում. սա ԳԱԱ նախագահի համոզմունքն է: Անդրադառնալով գիտության զարգացման խոչընդոտներին ու հնարավորություններին՝ ԳԱԱ նախագահը նշեց թիվ 1 խոչընդոտը՝ ֆինանսների բացակայությունը, մնացյալ խնդիրները ածանցյալ են դրանից:

Ինչ նկատի ունի Ռ. Մարտիրոսյանը՝ ասելով, թե հիմնարար գիտությունների առումով մենք հետ չենք մնում: Ինչպե՞ս է դա որոշվում: Ըստ նրա, վերցվել է, օրինակ, ֆիզիկայի բնագավառում բարձր համարում ունեցող 8-10 ամսագիր: Հետո համեմատվել է, թե 2000-2008թթ. քանի հոդվածներ են տպագրել Հայաստանը եւ նախկին ԽՍՀՄ երկրները:

Շարունակությունը՝ էջ 3

Եթե տաված fur լինի, գեսնին չի մնա



Սկիզբը՝ էջ 1

Ըստ այդ համեմատության, նշված տարիներին ՌԴ-ն տպագրել է 1000, Ուկրաինան՝ 1494, իսկ Հայաստանը՝ 363 հոդված: Փաստորեն, մենք երրորդ տեղում ենք: Ըստ Ռ. Մարտիրոսյանի, առաջինն են՝ մեկ ընչի հաշվով: Իսկ ֆինանսական խնդրին անդադարձնալու կարիք էլ չկա: Բավական է միայն մեկ թիվ մեջբերել. մեր ոլեսական բյուջեից գիտությունը տվող գումարները ցածր են՝ ՀՆԱ-ի 0.2, իսկ բյուջեի ծախսային մասի 0.8 տոկոսը: Համեմատեմ նաև ոլեսական բյուջեից գիտության ոլորտում մեկ աշխատողին հասնող ֆինանսական միջոցների թվերը. մեր երկրում այն տարեկան 5 հազար, Ուկրաինայում՝ 20 հազար, իսկ Բելառուսում՝ 13-14 հազար դոլարին համարժեք է:

Ինչ վերաբերում է կիրառական գիտության զարգացմանը հասկանալս այն համատասկերում, երբ անընդհատ հայտարարվում է, թե մեր տնտեսությունը գիտելիահեռ պիտի լինի, Ռ. Մարտիրոսյանը կարծում է, որ տնտեսության զարգացմանը զուգահեռ՝ կիրառական գիտությունն էլ առաջընթաց կպարի: Քանզի պատվերներ հենց տնտեսավարողներն են տալիս: Գիտության զարգացման խոչընդոտ է նաև կադրերի սակավությունը: Բացի այդ, երիտասարդները գիտության «գալ» չեն ուզում, որակյալ մասնագետներն էլ փչ են: Բայց, այսմանով հանդերձ, ակադեմիկոսը լավատես է. եթե տաված fur լինի, գեսնին չի մնա: Կան նաև այլ խնդիրներ. գիտահետազոտական հնստիտուտները չեն ջեռուցվում, նոր սարքավորումներ չեն ձեռքբերվում եւ այլն:

Ակադեմիայի գիտակազմակերպական գործունեության մասին զեկույցով հանդես եկավ ԳԱԱ-ի ակադեմիկոս-քարտուղար, թղթակից-անդամ **Արամ Շահինյանը**: Անդրադառնալով գիտական ոլորտի գործունեությունը կարգավորող իրավական դաշտում փոփոխություններին անհրաժեշտությանը՝ նա նկատեց, որ իրավական կարգավիճակով ԳԱԱ-ն զնդանի եւ սալի առանում է: Նկատառմանն ի պատասխան՝ նախագահ Սերժ Սարգսյանը անմիջապես ընդգծեց, որ իր հանձնարարությամբ շուտով ակադեմիայի մասին օրենքի նախագիծ կմտավկի, որը կտա բաս հարցերի պատասխաններ:

Գիտության ասպարեզում որոշակի հարցադրումներ եղան՝ գրաքննիչ վարչապետ Տիգրան Սարգսյանը: Նա իր ելույթում ասաց. «Գիտությունների ազգային ակադեմիայի տարեկան հաշվետու ժողովը գիտության զարգացման առկա հիմնախնդիրների ճնարկման եւ հասարակական լայն շրջանակներում երկխոսություն ծավալելու բացառիկ հնարավորություն է: Այս երկխոսության սկիզբը դրեց հանրաքեստության նախագահը՝ նախորդ տարվա հաշվետու ժողովի ժամանակ: Հանրաքեստության նախագահի կողմից բարձրացված եւ բուռն հասարակական ճնարկումների առարկա դարձած հարցերը դեռեւս չեն կորցրել իրենց արդիականությունը:

Ինչպիսին է լինելու գիտությունների ազգային ակադեմիայի առաջիկա: Քննարկումների ժամանակ հնչում է կարծիք, որ գիտության զարգացման օրակերը պետք է լինեն համալսարանները եւ ոչ թե ակադեմիական ինստիտուտները: Առկա է մոտեցում, որ ֆունդամենտալ գիտությունը չափազանց ծանր բեռ է Հայաստանի համար եւ անհարաժեշտ է զարգացնել միայն կիրառական գիտությունը, որ գիտության ասպարեզում կան բազմաթիվ բացասական երեւույթներ, որոնք պետք է բացահայտվեն եւ տրվեն լուծումներ: Մեղադրանք է հնչում, որ ԳԱԱ որոշ ինստիտուտներ չեն տալիս այնպիսի արդյունքներ, որոնք կարող են նպաստել մեր տնտեսության եւ հասարակության զարգացմանը եւ այլն:

Մենք պարտավոր ենք ձեզ հետ միասին տալ սպառիչ պատասխաններ այս հարցադրումներին: Հանդգնած եմ, որ այդ պատասխանները պետք է լինեն ոչ միայն խոսքով, այլ նաեւ գործով: Եվ ինչպես նախորդ ժողովին նշեց ՀՀ նախագահը, մեր ակադեմիական ինստիտուտների աշխատանքների արդյունքները եւ յուրաքանչյուր գիտնականի ձեռքբերումն ու որակավորումը պետք է գնահատվեն միջազգային չափորոշիչներով:

Ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ գիտությունների ազգային ակադեմիայի արդիականացումը պետական կարեւորության խնդիր է: Եվ հանրաքեստության նախագահի հանձնարարությունը՝ մշակել օրենքի նախագիծ, դրա վառ վկայությունն է:

Այս խնդրի լուծումը մենք կարող ենք գտնել ՀՀ կառավարության գործունեության ծրագրի հենքը հանդիսացող գոյաբանական հեռեւյալ հինգ դրույթների շրջանակներում.

1. Մենք պարտ ենք առաջ փոփոխվող աշխարհում եւ, բարեշրջություններ կատարելիս, պետք է ի վիճակի լինենք կանխատեսել այդ փոփոխությունները եւ դրանք համահունչ դարձնել առաջ փոփոխվող աշխարհի միտումներին:

Ինչպիսին է լինելու ճգնաժամի արդյունքում ձեւավորվող նոր աշխարհը: Արդյոք ԳԱԱ-ն ունի՞ այդ փոփոխությունները կանխատեսելու կարողություններ:

Մենք ձեզ հետ միասին պետք է ի վիճակի լինենք բացահայտել հասարակական զարգացումների օրինաչափությունները, ժամանակակից գիտության զարգացման հիմնական ուղղությունները եւ հայաստանի մասնագիտացումը:

Ակադեմիայում կա՞, արդյոք, ընդհանրական պատկերացում համաշխարհային գիտության զարգացման վերաբերյալ, եւ ինչպիսին է լինելու մեր դերը եւ տեղը: Եվ եթե կա այդ հարցի պատասխանը, արդյոք ինչո՞ւ չենք կառուցում այն պատած ձեւով մատուցել հանրությանը:

Կարծում եմ, որ ԳԱԱ-ն իր վրա պետք է վերցնի այս հարցերին պատասխանելու պատասխանատվությունը: Հասկանալի է, որ մենք չենք կարող ժամանակակից գիտության բոլոր ոլորտներում ունենալ հետազոտական կառուցվածքներ: ԳԱԱ-ի պատասխանները պետք է լինեն համահունչ ժամանակակից մարտահրավերներին: Եվ մենք ակնկալում ենք ձեր մասնակցությունը կառավարության 2009թ. առաջնահերթություններում ծրագրված գիտության զարգացման գերակայությունների մշակման աշխատանքներին, որոնք սեղտեմբերին միասին պետք է ներկայացնենք հանրային քննարկման:

2. Մենք ադրում ենք առաջ փոխրացող աշխարհում, ինչը նշանակում է, որ ժամանակակից աշխարհի ազդեցությունները մեզ վրա օրեցօր ուժգնանում են: Գիտական ասպարեզում դա նշանակում է, որ ակնհայտորեն բացահայտվում են մեր ուժեղ եւ թույլ կողմերը:

Ակնհայտ է, որ գիտության մակարդակը ՀՀ-ում դեռեւս ավելի բարձր է, քան մեզ հետ հանդիպելի զարգացման աստիճանում գտնվող այլ երկրներում:

Գիտության որոշ ճյուղերում մենք անդառնալիորեն հետ ենք մնացել ժամանակակից զարգացումներից, իսկ առանձին ոլորտներում դեռեւս ունենք հարաբերական առավելություններ:

Առաջ փոխրացող աշխարհում ԳԱԱ-ից պահանջվում է, որպեսզի նա վերածվի հայաստանի ներսում գիտելիի ինեզարդ ուժի: Դա նշանակում է, որ գիտությամբ զբաղվող բոլոր սուբյեկտների համար պետք է առպիովվեն համագործակցության մթնոլորտ եւ մեխանիզմներ:

Ավելին, ԳԱԱ-ից պահանջվում է ինեզարդում աշխարհի լավագույն գիտական կենտրոններին, եւ դրա շնորհիվ՝ մեր հարաբերական առավելությունները իրացնելու հնարավորություն ստեղծում: Եվ կարծում եմ, որ մեր հաշվեհամ ժամանակաշրջանի կարեւոր նվաճումներից մեկը հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի կազմում սփյուռքի բաժին ստեղծումն ու սփյուռքահայ 78 ճանաչված գիտնականների ընտրությունն է՝ որպես մեր ակադեմիայի արտասահմանյան անդամներ: Եվ դա էապես կարող է նպաստել վերոնշյալ խնդրի լուծմանը:

1. Մտագործունեությունը ժամանակակից աշխարհի հենքային գործընթաց է, ինչը նշանակում է, որ մեզ համար հասարակության եւ տնտեսության հենքը պետք է լինի գիտելիքը: Չկա կենսագործունեության որեւիցե ոլորտ, որը հիմնված չլինի գիտական նվաճումների վրա: Մեր կենսամակարդակի բարելավումը պետք է հիմնված լինի ոչ միայն արտասահմանյան, այլ նաեւ հայկական գիտելիքի միջոցով ստեղծված արդյունքների տարածման վրա: Ի վիճակի՞ եմք, արդյոք, մեծ՞ գիտնականների անմիջական մասնակցությամբ, բարելավել մեր կենսագործունեության այս կամ այն ոլորտը: Եթե այո, ապա որո՞նք են դրանք: Ինչպիսին պետք է լինի գիտություն-արտադրություն-սպառում շղթայում մեր ակադեմիական ինստիտուտների մասնակցությունը: Աշխարհի փորձը ցույց է տալիս, որ ֆունդամենտալ հետազոտությունները եւ առեւտրայնացումը պետք է սկսվեն միաժամանակ: Դա նշանակում է, որ ԳԱԱ-ն պետք է երկխոսություն սկսի տնտեսավարողների հետ:

2. Ժամանակակից աշխարհում հոգեւոր եւ մշակութային արժեքների դիտարկումը դառնում է ազգի գոյատեւման միակ հուսալի երաշխիք: Ազգային ինքնության դիտարկումը գլոբալացվող աշխարհում դիտանցում է լրացնող հետազոտություններ: Հայ ժողովրդի պատմության վերաիմաստավորումը, հայոց լեզվի դիտարկումը եւ զարգացումը, հայադիտարկությունը, հայի կերպարի ձեւավորումը՝ սոցիալ-մշակութային փիրաբանական հետազոտությունների հիման վրա, հանդիսանում են ժամանակակից հումանիտար գիտության կառուցադրույն խնդիրները: Ակնհայտ է, որ հայագիտությունը եղել եւ մնալու է կառավարության եւ ազգային ակադեմիայի համար գիտության զարգացման ամենակարեւոր առաջնահերթությունը:

3. Ժամանակակից մարդու գիտակցված դիտանցը ինքնարտահայտումն ու ինքնիրագործումն են: Մեր երկխոսության հանձնարարությունն է՝ ստեղծել գիտությամբ զբաղվելու բարենպաստ միջավայր: Գիտությամբ զբաղվելու ցանկություն ունեցող յուրաքանչյուր խաղաղաց պետք է դրա համար ունենա պատշաճ հնարավորություններ: Եվ մեզնից, ձեզ հետ միասին, դարավոր ենք ստեղծել գործում մեխանիզմներ, որպեսզի մուտը գիտության ասպարեզ բաց լինի գիտական ներուժ ունեցող, տաղանդավոր երիտասարդների համար, եւ բացառվի գիտության՝ որպես բանակից խուսափելու գործիքի ընկալումը:

Եվ այսպես, մեր աշխարհընկալման հինգ սյուների ներքո ԳԱԱ-ի առջեւ առկա խնդիրներն են՝

1. Առաջ փոփոխվող աշխարհի միտումների բացահայտում եւ դրա հիման վրա գիտության զարգացման առաջնահերթությունների մշակում:

2. Առաջ փոխրացող աշխարհում հայկական գիտությունը պետք է համադրելի լինի համաշխարհային գիտության հետ: ԳԱԱ-ն պետք է լինի այն խողովակը, որի միջոցով մեր գիտությունը կինտեգրվի աշխարհի լավագույն գիտական կենտրոններին:

3. Գիտելիքի վրա հիմնված հասարակության եւ տնտեսության ձեւավորման համար ակադեմիան պետք է հանրությանը ներկայացնի մտագործունեության ժամանակակից մեթոդներ եւ գործիքներ՝ հավելյալ արժեքի ստեղծման հոսքում ներմուծելով գիտության օդակը:

4. Հոգեւոր եւ մշակութային արժեքների պահպանումը ԳԱԱ-ի կառուցադրույն առաջնահերթությունն է:

5. Ժամանակակից մարդու՝ գիտական հետազոտություններով զբաղվելու գիտակցված պահանջը պետք է առաջնորդվի արդյունավետ մեխանիզմների ձեւավորմամբ: ԳԱԱ-ի շրջանակներում պետք է ստեղծվեն սերունդների միջեւ գիտելիքների փոխանցման արդյունավետ մեխանիզմներ, այդ թվում՝ գիտելիքների տարածման ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների օժանդակությամբ:

Ավարտելով խոսքս՝ ցանկանում եմ եւս մեկ անգամ կարեւորել այն երեք նոպասակները, որոնք հանդիսանում են գիտության զարգացման ամենակարեւոր առաջնահերթությունը:

1. Ժամանակակից աշխարհում ազգերի մրցակցությունը, առաջին հերթին, նրանց գիտական կարողությունների մրցակցությունն է: Հաղթելու են այն ազգերը, որոնք ունակ են ստեղծելու գիտական հզոր նետում:

2. Հաջողության հասնելու հպար պետք է առաջնորդվել այն գիտակցությամբ, որ գիտությունը կարող է զարգանալ միայն բարենպաստ միջավայրում, եւ այդպիսի միջավայրի ձեւավորումը կառավարության առաջնահերթություններից մեկն է:

3. Կառավարությունը պետք է հասնի նրան, որ հասարակության կողմից գիտությունն ընկալվի որպես արժեք, գիտությունը պետք է դառնա մեր էությունը, կենսական անհրաժեշտություն, մեր կյանքի անբաժան մասը:

Համոզված եմ, որ մենք միայն համատեղ ջանքերով կկարողանանք համախմբել մեր ազգի գիտական ներուժը եւ դրանով իսկ կաղամեղենք գիտության բեկունքային զարգացումը Հայաստանի հանրապետությունում:

Այդ գործում մեզ բոլորիս ցանկանում եմ հաջողություններ»:

Ասդիրանուռաս՝ դասալքության ոչ

Այս վերջին՝ բանակ չգնալ որակյալ ուսման համար գիտությամբ զբաղվելու խնդրին անդրադարձավ նաեւ ԳԱԱ թղթակից-անդամ **Ֆեձերկ Հովհաննիսյանը**: Նրա ելույթն, ի դեպ, բուռն արձագանքներ առաջացրեց: Ֆ. Հովհաննիսյանը մի քանի խնդիրներ արծարծեց.

1. ԲՈՅ-ի (բարձրագույն որակավորման հանձնաժողով) կանոնադրությունը խիստ արասավոր է, չափահիշեցող հստակ սահմանված չեն, սահմանված չեն նաեւ գիտական խորհրդի, անդամների իրավունքներն ու պարտականությունները:

2. Գիտությամբ սկսում են զբաղվել նրանք, ովքեր չեն ուզում բանակ գնալ: Ասպիրանտուրան դարձնում են դասալքության ոչ: Այս մասին պետք է բաս լրջորեն մտածել, որովհետեւ մենք կանգնած ենք գիտության բացառիկ ձեւախեղման (դեգրադացիայի) առաջ: Եթե այս գործընթացը շարունակվի, առաջիկա սասնամյակը չլրացած՝ խայտառակ վիճակում կհայտնվենք: Ուրեմն հարկ է, որ այս հարցը լուծվի կառավարական մակարդակով:

3. Պատմական Արցախի տարածքում որեւէ բինարություն անթույլատրելի է, մինչդեռ պարզվում է՝ կան անձնոնմխելի բիզնեսմենները: Մի՞թե ԳԱԱ-ն այնքան անզոր է, որ մի բիզնեսմեն կոչվածի հարցերը չի կարողանում լուծել: Իսկ եթե բիզնեսմենն այդքան զորեղ է, ուրեմն՝ հարկ է գտնել եւ պատժել նրան հանանվորողին:

4. Անհարժեշտ է նաեւ արտերկրի հայագետներին հուսել, որպեսզի թյուրըմբռնում չլինի, որ հայագիտությունը հիմները հայաստանում բաս ամուր են. «Որեւէ մեկը թող չմտածի, որ Երեւանում ստեղծվող գիտությունը որովինցիալ է, իսկ օվկիանոսից այն կողմ արվածը՝ միջազգային: Այդպիսի բան չկա: Գիտության մեջ որովինցիա չկա, անկախ այն բանից, թե որտեղ է գրվում, ինչ լեզվով, աշխարհի որ կետում: Հայաստանում արվածը արհամարհել չի՛ կարելի»:

Նախագահ Սերժ Սարգսյանը, ի պատասխան Ֆեձերկ Հովհաննիսյանի մասնավորապես 3-րդ հարցադրման, տեղեկացրեց, որ պատմական Արցախի տարածքում վերջին մեկ տարում մի կրնգ անգամ չի բարժվել:

Ֆ. Հովհաննիսյանի՝ ասպիրանտուրայի հետ կապված մտահոգություններին համապատասխանելու համար նա նշանակեց **Արամ Սիմոնյանը**, ում կարծիքով, միշտ կլինեն, որ 18 տարիս լրացած բոլոր երիտասարդներ, անկախ այն բանից, թե որ կուրսում են, զորակոչվեն բանակ: Այդ պարագայում բուն ընդունվելն ու հետո ասպիրանտուրայում սովորելը ինքնանպատակ չէին լինի: Նաեւ հարկ է, որ պետական լրջորեն ուսադրություն դարձվի հայագիտության ոլորտին:

Վերջաբան՝ թնվայից դուրս

Ելույթ ունենալ ցանկացողները բաս էին, բայց հասվի առնելով ժամանակի սղությունը՝ ԳԱԱ նախագահը սահմանափակեց դրանք: Բայց մի հարցում համամիտ էին գրեթե բոլոր գիտնականները. պետք է խթանել ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների եւ նորընտիր սփյուռահայ անդամների համագործակցությունը:

Եվ մի հարցում էլ դժգոհ էին սփյուռահայերը (բացառությամբ ՌԴ-ից եկածների). Ռուսասանից ժամանած անդամները ելույթ էին ունենում ռուսերեն, իսկ համաժամանակյա թարգմանություն չէր ապահովվում: Ու գուցե ի՞նչ որ բոլորի՞ էր, որ ավստրալահայը ելույթը սկսեց հայերեն եւ անցավ անգլերենի, թեեւ հայերեն վաս չէր խոսում...

Արմենուհի ՄԵԼՔՈՆՅԱՆ